

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (IFB)
Հայաստանի Հանրապետություն
Դատաիրավական Բարեփոխումներ Երկրորդ Ծրագիր

Վարկ No.4265

Հայտերի ներկայացման Հրավերի անվանումը՝ **«ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի դատարանի շենքի կառուցում», JR2/W2/004**

1. Սույն Հայտերի Ներկայացման Հրավերը հաջորդում է սույն Ծրագրի համար հրապարակված Ծրագրի Գնումների Ընդհանուր Ծանուցմանը, որն զետեղվել է «Development Business» պարբերականի 2007թ. հունիսի 16-ի թիվ 704 համարում:
2. Հայաստանի Հանրապետությունը Միջազգային զարգացման ընկերակցությունից (IDA) ստացել է վարկ «Դատաիրավական Բարեփոխումներ Երկրորդ» ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը **«ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի դատարանի շենքի կառուցում», JR2/W2/004** պայմանագրով անհրաժեշտ վճարումները կատարելու համար: Սրբութային գործընթացը իրականացվելու է ՀԲ-ի կողմից սահմանված իրավասության կանոնների և ընթացակարգերի պահանջների պահպանմամբ:
3. «Դատաիրավական բարեփոխումներ ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հրավիրում է ներկայացնել փակված հայտեր՝ իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող հայտատուների կողմից Գորիս քաղաքի դատարանի շենքի կառուցումն աշխատանքները իրականացնելու համար: Շինարարական աշխատանքների իրականացման ժամկետն է 15 ամիս:
4. Սրբույթը կիրականացվի Համաշխարհային Բանկի կողմից ընդունված «Ուղեցույցներ: ՄԶՎԲ փոխառությունների և ՄԶԸ վարկերի շրջանակներում գնումներ»-ով /2004թ. մայիս ամսի ընդունված, հետագայում 2006թ. հոկտեմբեր ամսին լրամշակված խմբագրությամբ/ սահմանված գործընթացների կազմակերպմամբ՝ Ազգային Սրբակցային Սրբույթի եղանակով: Սրբույթը բաց է Սրբութային փաստաթղթերով սահմանված իրավասու երկրների ծագում ունեցող բոլոր հայտատուների համար, ինչպես սահմանված է Ուղեցույցներ-ում:
5. Շահագրգիռ և իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել «Դատաիրավական բարեփոխումներ ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկից /դիմել տնօրեն՝ պարոն Ա. Թունյանին/ և ուսումնասիրել դրանք ստորև նշված հասցեյում՝ բոլոր աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00:
6. Որակավորման չափանիշները ներառում են.
 - **վերջին 5 տարիների ընթացքում՝ 2003-2007 թվականների ժամանակահատվածում, միջինացված յուրաքանչյուր տարվա կտրվածով, կատարված շինարարական աշխատանքների դրամական արտահայտությունը պետք է կազմի առնվազն 300 միլիոն ՀՀ դրամ (ԱԱՀ ներառյալ)**
 - **որպես գլխավոր կապալառու՝ 2003-2007 թվականների ընթացքում պահանջվող աշխատանքների համեմատ նույն բնույթի և բարդության առնվազն 2 (երկու) շինարարական աշխատանքներ կատարելու փորձ (սույն պահանջը բավարարելու իմստով՝ նշված աշխատանքները պարտադիր պետք է իրականացված/ավարտված լինեն առնվազն 70 տոկոսի չափով)**

- Հայտատուի շրջանառու ընթացիկ միջոցներ առնվազն 50 միլիոն ՀՀ դրամ կամ դրան համարժեքը այլ ազատ փոխարկելի արժույթով, որը պետք է լինի այլ պայմանագրային պարտավորություններով չծանրարեռնված և Պայմանագրի շրջանակներում կանխավճարի բացառմամբ
- առնվազն պետք է առկա լինի նվազագույնը 0.65լս.մ ծավալով էքսկավատոր՝ երկու միավոր
- առնվազն պետք է առկա լինի նվազագույնը ՂՏ-42 կամ դրան համարժեք հզորությամբ բուլբոլեր՝ մեկ միավոր
- առնվազն պետք է առկա լինի նվազագույնը 5տ. բեռնատարությամբ ավտոինքնաթափ բեռնատար մեքենաներ՝ ութ միավոր
- առնվազն պետք է առկա լինի ԿԲԿ-160.1 կամ դրան համարժեք աշտարակային կոունկ՝ մեկ միավոր
- առնվազն պետք է առկա լինի բետոնատար մեքենա՝ վեց միավոր
- ԿԲԿ-160.1 կամ դրան համարժեք աշտարակային կոունկ՝ մեկ միավոր
- առնվազն պետք է առկա լինի ավտոամբարձիչ՝ մեկ միավոր
- առնվազն պետք է առկա լինի քարշիչ մեքենա՝ մեկ միավոր
- առնվազն պետք է առկա լինի ավտոկոունկ՝ երկու միավոր

Ազգային կապալառուների/համատեղ ձեռնարկության մասնակիցների նկատմամբ չպետք է կիրառվի ընտրության տոկոսային նախապատվություն:

7. Հետաքրքրություն ունեցող հայտատուների կողմից մրցութային փաթեթը ամբողջապես հայերեն լեզվով կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեով գրավոր դիմում ներկայացնելու և 50,000 ՀՀ դրամ գումարի (ներառյալ ԱԱՀ) չափով չհատուցվող գումար վճարելու պարագում: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ում սպասարկվող թիվ 001-124346-003 բանկային հաշվի օգտին: Մրցութային փաստաթղթերը կառաքվեն առաքիչի միջոցով Երևան քաղաքի տարածքում կամ պաշտոնական փոստային կապի միջոցով՝ Երևանից դուրս առաքելու պարագայում:
8. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև կամ 2008թ. մայիսի 12-ի ժամը 16:00-ը: Էլեկտրոնային եղանակով մրցութային հայտերի ներկայացում չի թույլատրվում: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն անմիջապես նույն օրվա ժամը 16:00-ին մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ՝ ստորև նշված հասցեով:
9. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն Մրցութի ապահովման երաշխիքով, որի գումարը պետք է լինի առնվազն 5,000,000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք ազատ փոխարկելի օտարերկրյա արժույթ:
10. Վերևում հիշատակվող հասցեն է.
«Դատախիրավական բարեփոխումներ ՕԻԳ» ՊՀ
Թումանյան 21/1
Երևան, 0001 Հայաստան
Հեռ.՝ (+37410) 520885 լրաց. 104
Ֆաքս՝ (+37410) 520885 լրաց. 104
Էլ. փոստի հասցե՝ jrpju@arminco.com